



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2012թ. ապրիլին /վերլուծություն/

2012թ. ապրիլին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 13555 գործարքներ, որոնց քանակը 2012թ. մարտի համեմատ նվազել է 1.8%-ով, իսկ 2011թ. ապրիլի համեմատ՝ 16.9%-ով:

2012թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3411 օտարման գործարքների 77.6%-ը կազմել են առուվաճառքները, 21.7%-ը՝ նվիրատվությունները և 0.7%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի

43.6%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 40.0%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2012թ. ապրիլին, 2012թ. մարտի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 5.5%-ով, իսկ 2011թ. ապրիլի համեմատ նվազել է 14.9%-ով:

2012թ. ապրիլին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 62.1%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2012թ. ապրիլին, 2012թ. մարտի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 2.0%-ով, իսկ 2011թ. ապրիլի համեմատ նվազել է 17.6%-ով:

2012թ. ապրիլին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	ապրիլ 2011թ.	ապրիլ 2012թ.	մարտ 2012թ.
Կենտրոն	447300	405000	400000
Արաբկիր	347400	335000	333050
Քանաքեռ-Զեյթուն	264200	262300	260000
Նոր-Նորք	225700	225100	225050
Ավան	232200	235100	233000
Էրեբունի	235400	233100	233100
Շենգավիթ	230800	231000	229000
Դավթաշեն	252000	257500	254500
Աջափնյակ	222000	225050	221050
Մալաթիա-Սեբաստիա	221900	222000	219750
Նուբարաշեն	149500	140100	140100
Միջինը Երևանում /բացի Նորք-մարաշից/	257100	251900	249900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. ապրիլին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. մարտի համեմատ, աճել են 0.8%-ով:

2012թ. ապրիլին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 312 բնակարաններ, որոնց քանակը, 2012թ. մարտի համեմատ նվազել է 4.0%-ով իսկ 2011թ. ապրիլի համեմատ աճել է 0.3%-ով:

2012թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		ապրիլ 2011թ.	ապրիլ 2012թ.	մարտ 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	132400	110100	110000
	Ապարան	47400	48000	48000
	Թալին	58315	60850	60800
Արարատ	Արտաշատ	93700	91150	91100

	Մասիս	128200	107500	107200
	Վեդի	89900	96100	95000
	Արարատ	81300	73050	72000
Արմավիր	Վաղարշապատ	146000	151200	151000
	Արմավիր	121800	116800	116800
	Մեծամոր	84100	86000	85100
Գեղարքունիք	Սևան	89360	96000	96000
	Գավառ	49600	51000	51000
	Մարտունի	89500	102000	100000
	Վարդենիս	34700	33000	32000
	Ճամբարակ	23100	21100	21000
Լոռի	Վանաձոր	93600	85000	83500
	Ստեփանավան	64300	72000	72000
	Սպիտակ	83200	99000	98000
	Ալավերդի	36300	49000	49000
	Տաշիր	39300	40000	40000
	Թումանյան	12500	11000	11000
	Շամլուղ	7700	8000	8000
	Ախթալա	17800	19500	19500
Կոտայք	Աբովյան	141800	151050	151000
	Նոր Հաճն	125300	127900	127900
	Բյուրեղավան	105600	106800	106800
	Եղվարդ	105500	108000	108000
	Հրազդան	58800	58000	56500
	Ծաղկաձոր	184400	292000	292000
	Չարենցավան	75500	82500	82500
Շիրակ	Գյումրի	108100	107200	107000
	Արթիկ	62900	64100	64100
	Մարալիկ	32100	35600	35600
Սյունիք	Գորիս	130600	114000	115000
	Կապան	104700	88000	88000
	Սիսիան	86400	78000	78100
	Մեղրի	65500	65000	65000
	Ագարակ	36500	39700	39700
	Քաջարան	65200	94050	94050
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	76700	82000	82000
	Եղեգնաձոր	108000	115100	115100
	Զեյրմուկ	125200	100100	100000
Տավուշ	Դիլիջան	106600	102000	102000
	Իջևան	130400	110000	110000
	Բերդ	46200	48500	48500
	Նոյեմբերյան	37700	41000	40000
	Այրում	26200	24500	24500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2012թ. մարտի համեմատ, աճել են 0.3%-ով:

2012թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 351 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 106, մարզերում միասին վերցրած՝ 245: 2012թ. ապրիլին, 2012թ. մարտի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 14.0%-ով, ընդ որում Երևանում աճել `0.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել` 19.1%-ով: 2011թ. ապրիլի համեմատ` անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 21.5%-ով, ընդ որում Երևանում` 9.4%-ով, իսկ մարզերում միասին վերցրած` 25.8%-ով:

2012թ. ապրիլին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	ապրիլ 2011թ.	ապրիլ 2012թ.	մարտ 2012թ.
Կենտրոն	467000	458900	458800
Արաբկիր	378000	364500	364000
Քանաքեռ Չեյթուն	275400	275200	274700
Նորք Մարաշ	278000	301100	301000
Ավան	238200	255500	249200
Էրեբունի	236800	225300	219100
Շենգավիթ	240900	240000	239000
Դավթաշեն	265000	258300	257000
Աջափնյակ	234400	236700	236000
Մալաթիա Սեբաստիա	231900	223000	219000
Նուբարաշեն	150700	144500	144500
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	272391	269400	269400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. ապրիլին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. մարտի համեմատ աճել են են 0.7%:

2012թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Սարգեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		ապրիլ 2011թ.	ապրիլ 2012թ.	մարտ 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	136400	130150	130100
	Ապարան	48800	51200	51200
	Թալին	59400	68450	68450
Արարատ	Արտաշատ	103700	97450	97400
	Մասիս	132200	110100	110050
	Վեդի	92400	99500	99500
Արմավիր	Արարատ	83600	87000	86900
	Վաղարշապատ	163000	150000	143800
Գեղարքունիք	Արմավիր	126200	102000	99100
	Սևան	93300	91000	88300
	Գավառ	50600	50800	44900
	Մարտունի	90300	90100	89350
	Վարդենիս	36800	34000	33000
	Ճամբարակ	25900	25900	25900
	Վանաձոր	103300	95000	94100

Լոռի	Ստեփանավան	64800	86900	86900
	Սպիտակ	89600	111100	111100
	Ալավերդի	37000	46500	42150
	Տաշիր	43700	50100	50100
	Թումանյան	12900	12000	12000
	Շամլուղ	9000	13200	13200
	Ախթալա	18800	29400	29400
Կոտայք	Արսիկ	149400	150000	143300
	Նոր Հաճն	133400	128000	127200
	Բյուրեղավան	107400	119900	119900
	Եղվարդ	110800	114400	114400
	Հրազդան	64900	77000	77000
	Ծաղկաձոր	310000	303600	303600
	Չարենցավան	77300	80000	74000
Շիրակ	Գյումրի	119000	115500	115100
	Արթիկ	63200	61000	59900
	Մարալիկ	34400	48000	48000
Սյունիք	Գորիս	139200	126800	126800
	Կապան	106700	97600	97600
	Սիսիան	87200	87600	87600
	Մեղրի	66400	74000	74000
	Ագարակ	36900	45900	45900
	Դաստակերտ	10500	11600	11600
Վայոց Ձոր	Վայք	77300	81500	81200
	Եղեգնաձոր	115000	110000	109400
	Ջերմուկ	127000	118400	118400
Տավուշ	Դիլիջան	107800	103000	103000
	Իջևան	140000	119800	119800
	Բերդ	47500	57700	57700
	Նոյեմբերյան	38200	45600	45600
	Այրում	26900	34200	34200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2012թ. մարտի համեմատ, աճել են 1.1%-ով:

Ընդհանուր առմամբ, 2012թ. ապրիլին հանրապետությունում օտարվել են 1036 միավոր /655.64 հա/ հողեր, որից Երևանում` 113 միավոր /11.19 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 532 միավոր /597.05 հա/, որից Երևանում` 7 միավոր /1.02 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 343 միավոր /33.45 հա/, որից Երևանում` 41 միավոր /2.86 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 136 միավոր /10.85 հա/, որից Երևանում` 62 միավոր /6.86 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 15 միավոր /9.58 հա/, որից Երևանում` 3 միավոր /0.46 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր` 4 միավոր /1.78 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր` 6 միավոր /2.94 հա/ ընդհանուր մակերեսով:

2012թ. ապրիլին հանրապետությունում օտարված հողերից 875 միավորի /519.95 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում` 99

միավոր /9.53 հա/, նվիրատվության գործարքներ՝ 157 միավորի /135.45 հա/, որից Երևանում՝ 13 միավոր /1.66 հա/ և փոխանակության գործարքներ՝ 4 միավորի /0.24 հա/:

Հանրապետությունում 2012թ. ապրիլին, 2011թ. ապրիլի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 21.5%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 26.4%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 18.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 36.4%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արագածոտնի մարզում՝ 193.17 հա, որից 190.30 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 14.6%-ը կամ 128 գործարքներ /90.26 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 14 միավոր /1.54 հա/, իսկ 84.7%-ը կամ 741 միավորը /426.85 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 85 միավոր /8.00 հա/:

2012թ. ապրիլին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 3 գործարք /7.74 հա/:

Ստորև ներկայացվում է 2012թ. ապրիլին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	0	0.00	0	0.00	3	0.27	11	1.27	5	0.82	3	0.46	31	2.04	46	4.68
Արագածոտն	3	17.63	2	0.17	0	0.00	0	0.00	37	172.67	0	0.00	16	1.60	4	0.49
Արարատ	4	19.41	0	0.00	2	0.17	4	0.05	124	84.94	3	3.99	49	4.18	3	0.03
Արմավիր	3	3.77	0	0.00	4	0.92	0	0.00	58	38.83	1	0.04	55	6.59	3	0.18
Գեղարքունիք	8	3.74	0	0.00	2	0.20	2	0.15	39	12.73	0	0.00	28	3.52	2	0.05
Լոռի	0	0.00	0	0.00	2	0.03	12	0.10	14	13.49	0	0.00	13	2.10	1	0.005
Կոտայք	6	17.42	2	2.26	10	0.40	6	0.04	60	20.25	2	2.43	64	5.91	2	0.03
Շիրակ	0	0.00	0	0.00	3	0.16	7	0.08	17	13.04	0	0.00	7	0.55	4	0.09
Սյունիք	4	12.55	1	0.23	2	0.04	2	0.21	13	18.06	0	0.00	2	0.28	0	0.00
Վայոց Ձոր	3	6.39	1	0.00 2	1	0.03	3	0.04	13	5.96	0	0.00	1	0.12	1	0.02
Տավուշ	0	0.00	0	0.00	6	0.51	5	0.39	8	5.59	0	0.00	6	0.81	2	0.02
Ընդամենը	31	80.91	6	2.66	35	2.73	52	2.33	388	386.38	9	6.92	272	27.70	68	5.59

Ստորև ներկայացվում է 2012թ. ապրիլին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք											
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր					
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի			
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	14	1.54	0	0.00	3	0.27	11	1.27	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	5	17.80	3	17.63	2	0.17	0	0.00	0	0.00	0	0.00
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	10	19.63	4	19.41	0	0.00	2	0.17	4	0.05	0	0.00
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	7	4.69	3	3.77	0	0.00	4	0.92	0	0.00	0	0.00
Գեղարքունիք	1	0.03	0	0.00	0	0.00	1	0.03	11	4.06	8	3.74	0	0.00	2	0.20	1	0.12	0	0.00
Լոռի	4	0.03	0	0.00	0	0.00	4	0.03	10	0.10	0	0.00	0	0.00	2	0.03	8	0.07	0	0.00
Կոտայք	6	0.21	0	0.00	4	0.19	2	0.02	14	3.66	2	1.18	2	2.26	6	0.21	4	0.01	0	0.00
Շիրակ	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	9	0.24	0	0.00	0	0.00	3	0.16	6	0.08	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	9	13.03	4	12.55	1	0.23	2	0.04	2	0.21	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	8	6.46	3	6.39	1	0.002	1	0.03	3	0.04	0	0.00
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	11	0.90	0	0.00	0	0.00	6	0.51	5	0.39	0	0.00
Ընդամենը	26	1.81	0	0.00	7	0.46	19	1.35	94	70.57	27	64.67	6	2.66	28	2.27	33	0.97		

2012թ. հանրապետությունում ապրիլին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքների 4 գործարք /16.24 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2012թ. ապրիլին, 2011թ. ապրիլի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 50.8%-ով: Ընդ որում, Երևանում մնացել է անփոփոխ, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել է 50.8%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 54.2%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 50.9%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 52.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 20.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	2.89	71.9	373.6	222.8	23	31.80	365.0	12000.0	4000.0
Ապարան						4	5.83	86.5	2727.3	690.0
Թալին	1	14.74	37.7	37.7	37.7	7	127.68	93.6	5494.5	590.5
Ծաղկահովիտ						3	7.36	79.5	1000.0	234.5
Արարատի մարզ										
Արտաշատ						54	16.43	335.1	10833.3	2680.6
Մասիս	1	1.69	84.1	84.1	84.1	27	33.28	200.0	11904.8	3040.3
Վեդի	3	17.72	283.2	528.0	365.7	43	35.23	207.0	10795.1	1773.4
Արմավիրի մարզ										
Արմավիր						34	21.47	294.3	9090.0	1552.6
Բաղրամյան	2	3.37	70.0	1595.0	832.9	8	10.41	90.6	2561.1	725.3

Վաղարշապատ	1	0.40	479.6	479.6	479.6	15	6.74	444.4	11764.7	2785.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						34	8.92	199.8	1875.0	392.6
Ճամբարակ						1	1.08	60.5	953.3	332.1
Մարտունի						2	0.21	51.1	2850.0	725.5
Սևան	8	3.74	400.0	400.0	400.0	1	2.40	52.2	2134.8	315.3
Վարդենիս						1	0.12	41.2	2575.1	373.4
Լոռու մարզ										
Ալավերդի								170.4	6424.2	672.5
Գուգարք						3	0.68	234.6	6065.9	758.3
Սպիտակ								250.0	5555.5	728.1
Ստեփանավան						5	7.61	90.6	1686.6	292.6
Տաշիր						4	3.43	45.3	1384.4	139.3
Կոտայքի մարզ										
Աբովյան						24	5.44	279.3	11942.7	4658.7
Եղվարդ						25	10.09	174.4	11971.8	2838.9
Հրազդան	2	1.18	819.7	868.8	844.2	11	4.72	130.5	10256.4	1919.6
Շիրակի մարզ										
Ախուրյան						4	5.04	252.0	1693.1	578.3
Ամասիա								40.9	261.0	128.5
Անի						1	1.60	110.6	546.9	370.0
Աշոցք						1	1.07	58.5	215.8	121.5
Արթիկ						11	5.34	79.4	1428.6	378.4
Սյունիքի մարզ										
Գորիս						1	0.38	92.6	1023.2	687.7
Կապան	1	6.00	585.8	585.8	585.8	4	3.77	120.0	841.6	335.3
Մեղրի						2	0.68	193.0	3000.0	721.3
Սիսիան	3	6.55	75.0	135.0	115.0	6	13.24	46.3	1977.4	493.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	0.39	203.0	634.4	418.7	11	5.38	125.0	10000.0	1865.5
Վայք	1	6.00	110.0	110.0	110.0	2	0.58	58.8	1430.7	600.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.20	213.3	3783.8	672.5
Իջևան						4	3.58	267.5	9454.5	1228.2
Նոյեմբերյան						3	1.81	46.7	7368.4	835.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						15	14792.0	130.7	22200.0	2571.8
Ապարան								124.1	609.6	362.4
Թալին						1	1200.0	63.2	1454.8	152.2
Ծաղկահովիտ								60.0	214.3	86.3

Արարատի մարզ										
Արտաշատ	2	1700.0	269.0	363.4	316.2	13	12852.1	173.9	7140.3	892.7
Մապիս						22	14235.0	187.5	25000.0	1215.3
Վեդի						14	14670.0	126.1	5000.0	660.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	842.0	356.3	356.3	356.3	16	23649.0	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան								100.0	833.3	232.5
Վաղարշապատ	3	8405.0	48.0	6020.5	2042.0	37	37273.0	197.4	26528.4	1527.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	2000.0	110.0	110.0	110.0	8	8457.0	186.6	1084.3	661.5
Ճամբարակ								71.3	2286.2	148.1
Մարտունի						15	16615.0	119.3	5000.0	280.2
Սևան						1	1330.0	240.0	3110.4	304.5
Վարդենիս						4	8831.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի	1	16.1	954.5	954.5	954.5	2	1413.0	114.3	1388.9	216.0
Գուգարք	1	242.0	1949.0	1949.0	1949.0	5	10792.0	77.9	14083.3	1067.5
Սպիտակ						4	6850.0	104.9	1348.3	204.4
Ստեփանավան						2	1960.0	88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	5	900.5	3234.0	5216.7	4585.9	26	20494.0	264.5	35353.5	1970.0
Եղվարդ						33	35191.4	173.6	27000.0	2848.7
Հրազդան	1	1200.0	818.3	818.3	818.3	5	3385.0	117.7	34848.5	1320.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	3	1641.0	554.4	3125.0	2075.0	5	4290.1	113.6	18750.0	331.2
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի								67.9	180.6	158.0
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ						2	1180.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						1	400.0	112.2	1700.0	371.6
Կապան	2	391.0	972.1	978.5	975.3	1	2400.0	67.9	2638.9	296.1
Մեղրի								68.5	632.9	190.0
Սիսիան								123.5	875.0	195.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	273.0	245.4	245.4	245.4	1	1200.0	96.7	7659.6	498.5
Վայք								120.7	1448.3	200.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	1880.0	75.8	810.0	110.3
Իջևան	2	1735.0	3000.0	3000.0	3000.0	4	4964.0	74.1	14423.1	521.3
Նոյեմբերյան	4	3406.0	176.0	1100.0	407.0	1	1260.0	125.0	1948.1	221.0

2012թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 754 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.6%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 66.0%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2012թ. ապրիլին, 2012թ. մարտի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 2.6%-ով, իսկ 2011թ. ապրիլի համեմատ նվազել է 2.3%-ով:

2012թ. ապրիլին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 48 բնակարանների, 65 անհատական բնակելի տների, 309 հասարակական, 61 արտադրական նշանակության օբյեկտների, 236 միավոր /371.65 հա/ հողերի և 32 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2012թ. ապրիլին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 28 վարձակալության գործարքների /այդ թվում 6 միավոր՝ 0.57 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2012թ. մարտի համեմատ նվազել է 41.7%-ով, իսկ 2011թ. ապրիլի համեմատ աճել է 9.3 անգամ: 2012թ. ապրիլին հանրապետությունում վարձակալված 371.65 հա հողերից 1.57 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 370.08 հա հողերից 2.91 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 1.64 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արագածոտնի մարզում՝ 163.29 հա, որից 163.12 հա գյուղատնտեսական նշանակության: 2012թ. ապրիլին հանրապետության մարզերում վարձակալվել են 348.61 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2012թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2091 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 15.4%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. մարտի համեմատ, աճել է 6.6%-ով, իսկ 2011թ. ապրիլի համեմատ նվազել՝ 13.1%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /50.6%/, առանձնատների /22.6%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.6%/ և հողերի /10.7%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 948 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2012թ. մարտի համեմատ, աճել է 9.9%-ով, իսկ 2011թ. ապրիլի համեմատ նվազել՝ 2.2%-ով:

2012թ. ապրիլին հանրապետությունում գրավադրվել են 2879.56 հա հողեր, որից 3.24 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 99.3%-ը կան 2858.15 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.20 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 2777.22 հա, որից 2761.95 հա գյուղատնտեսական նշանակության:

2012թ. ապրիլին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 172 գործարքներ, որից 85-ը՝ Երևանում: 2012թ. մարտի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 2.5 անգամ, ընդ որում Երևանում՝ 2.7 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ 4.8 անգամ: 2011թ. ապրիլի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 20.4%-ով, ընդ որում Երևանում՝ 50.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 93.3%-ով:

2012թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1384 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2012թ. մարտի համեմատ աճել է 13.5%-ով, իսկ 2011թ. ապրիլի համեմատ նվազել՝ 54.1%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 10.2%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /30.2%/:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե